



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- հունիսի 2018 թվականի №---Ա
ք.Երևան

**«ԲԱՐՁՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՆԵՐԿՐՄԱՆ ԼԷ №0578 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «Բարձրավուտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի հունիսի 19-ին հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 7 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 25-ի №203Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Վրաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման ԼԷ №0578 լիցենզիայի գործողության ժամկետը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 30-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում լիցենզավորված անձն իրավունք ունի լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից առնվազն 23 աշխատանքային օր առաջ հայտով դիմել Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 4 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2018 թվականի հունիսի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 30-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը, վկայակոչելով որոշ տեխնիկական բնույթի խնդիրներ, ըստ էության, ընդունել է թույլ տրված Կարգի խախտումը,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 30-րդ կետի պահանջը՝ հայտը սահմանված 23 աշխատանքային օր առաջ ներկայացնելու փոխարեն ներկայացնելով 4 աշխատանքային օր առաջ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 32-րդ հոդվածները, 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, Կարգը, Կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

Երկարաձգել Հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 25-ի «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը Վրաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման լիցենզիա տրամադրելու մասին» №203Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակի ժամանակ Վրաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման ԼԷ №0578 լիցենզիայով ամրագրված գործողության ժամկետը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի հունիսի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի հունվարի 25-ը» բառերով:

1. Կարգի 30-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝
 - 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել հինգ հարյուր հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2019 թվականի փետրվարի 25-ը գործողության ժամկետով:
 - 2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 25-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՕՍՈՒՑՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ